ՀԱՎԵԼՎԱԾ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. **Զոհրաբ Սիանոսյան**

2020 թ. մարտի 10-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ հարավարևմտյան հատվածում տեղակայված ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պահպանության շրջանի մարտական դիրքի ուղղությամբ ադրբեջանական ՀՈՒ կողմից արձակված կրակոցի հետևանքով կրծքավանդակի շրջանում հրազենային վնասվածքից մահացել է պայմանագրային զինծառայող, շարքային Զոհրաբ Գրիգորիի Սիանոսյանը[1]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով[2]:

Հետագայում հարուցված քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով:

2. **Գարուշ Համբարձումյան**
3. **Սոս Էլբակյան**
4. **Սմբատ Գաբրիելյան**
5. **Գրիշա Մաթևոսյան**
6. **Արթուր Մուրադյան**

2020 թ. հուլիսի 14-ին հայ-ադրբեջանական պետական սահմանագոտու հյուսիսարևելյան հատվածում հակառակորդի արձակած կրակից մահացու վիրավորում են ստացել զինծառայողներ մայոր Գարուշ Վեմիրի Համբարձումյանը, կապիտան Սոս Փայլակի Էլբակյանը, ժամկետային զինծառայողներ՝ կրտսեր սերժանտ Սմբատ Գևորգի Գաբրիելյանը, կրտսեր սերժանտ Գրիշա Վահանի Մաթևոսյանը[3]*:*

Իսկ ծանր վիրավորում ստացած ժամկետային զինծառայող, շարքային Արթուր Բագրատի Մուրադյանը մահացել է հուլիսի 23-ին ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում[4]*:*

Գարուշ Համբարձումյանի, Սոս Էլբակյանի, Սմբատ Գաբրիելյանի, Գրիշա Մաթևոսյանը մահվան դեպքերի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետով:

Իսկ Արթուր Մուրադյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 34.104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով՝ երկու

---

[1] http://mil.am/hy/news/7573

[2] http://investigative.am/news/view/zohrab-sinosyan.html

[3] http://www.mil.am/hy/news/8082

[4] https://www.tert.am/am/news/2020/07/23/Stepanyan/3352321

կամ ավելի անձանց սպանության փորձ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:

Կատարվում է նախաքննություն:

7. **Աշոտ Միքայելյան**

2020 թ. հուլիսի 27-ին, ժամը 01.10-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական դիրքում, հակառակորդի կողմից դիպուկահար հրազենից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող Աշոտ Գևորգի Միքայելյանը[5]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած տեղեկատվության՝ զինծառայողը վնասվածքը ստացել է մարտական դիրքից դիպուկահարի կրակոցից՝ կոկորդի շրջանում: Նա մահացել է զինվորական հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին[6]:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետերով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն[7]:

8. **Հովիկ/ Հովհաննես Թամրազյան**

2020 թ. սեպտեմբերի 16-ին հյուսիսարևելյան հատվածում տեղակայված զորամասերից մեկի մարտական դիրքում մահացու հրազենային և բեկորային վնասվածքներ է ստացել պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ Հովիկ Նելսոնի Թամազյանը[8]*:*

Զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին զինծառայողը մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետերով հարուցվել է քրեական գործ: Կատարվում է նախաքննություն[9]:

9. **Անդրանիկ Շահնազարյան**
10. **Հարություն Մկրտչյան**
11. **Գևորգ Աշակյան**
12. **Գարիկ Բարսեղյան**
13. **Արմեն Մարտիրոսյան**
14. **Սմբատ Ավետիսյան**
15. **Սարգիս Հարությունյան**
16. **Ռոման Մարգարյան**

---

[5] http://mil.am/hy/news/8144

[6] https://www.investigative.am/news/view/ashot-miqayelyan.html?fbclid=IwAR1e4eOpzt375YoRHMKfu9hk43KoppEAlwQ5h48I8p1vh3ERyba4Nh4KJVk#.Xx6Hl5zWTeE.facebook

[7] https://www.investigative.am/news/view/ashot-miqayelyan.html

[8] https://mil.am/hy/news/8373

[9] https://www.investigative.am/news/view/zincarayogh-hovik-tamrazyan.html

17. Հարություն Անդրեասյան

2020թ. դեկտեմբերի 15-ին Ադրբեջանի մի խումբ զինծառայողներ, ազգային և կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթներով, երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, հրաձգային զենքերի գործադրմամբ սպանել են ԱՀ/ԼՂ Հադրութի շրջանի Հին Թաղեր և Խծաբերդ գյուղերի տարածքում տեղակայված մարտական դիրքերում մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի 9 զինծառայողների[10]*:*

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի (սպանություն) 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով և 390-րդ հոդվածի (միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ) 1-ին մասի 2-րդ կետով:

Բ.Ինքնասպանություն
Զինվորական ծառայության հետ կապված

1. Գեղամ Խաչատրյան

2020 թ. հունվարի 6-ին ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում պայմանագրային զինծառայող Գեղամ Վիկտորի Խաչատրյան իրեն կցված գնդացրից կրակոց է արձակել՝ իրեն պատճառելով մահացու հրազենային վիրավորում[11]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը: Կատարվում է նախաքննություն:

2. Վահրամ Ավագյան

2020 թ. հունվարի 30-ին ԱՀ/ԼՂ ՊԲ կենտրոնական ենթակայությամբ գործող զորամասերից մեկում ՊԲ ժամկետային զինծառայող Վահրամ Մկրտիչի Ավագյանը, ըստ ԱՀ/ԼՂ ՊՆ մամուլի ծառայության տարածած հաղորդագրության, իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի ինքնաձիգից կրակոց է արձակել իր կրծքավանդակի շրջանում և տեղափոխվել զինվորական հոսպիտալ, որտեղ ժամը 14:00-ին մահացել է[12]*:*

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել քրեական գործ: Կատարվում է նախաքննություն:

Վահրամ Ավագյանի հարազատները չեն հավատում ինքնասպանության վարկածին: Դեպքի օրը զինծառայողի եղբայրը 2 անգամ խոսել է նրա հետ՝ առաջին

---

[10] https://www.investigative.am/news/view/hadrut-9-zincarayoxi-spanutyun.html

[11] http://investigative.am/news/view/gexam-xachatryan.html

[12] http://nkrmil.am/news/view/2659, http://yerkirmedia.am/low/qnnchakan-zincarayogh-mah/

անգամ առավոտյան ժամը 10-ի շրջանում, երկրորդ անգամ՝ դեպքից 1 ժամ առաջ: Նա արտառոց ոչինչ չի նկատել եղբոր հետ խոսելիս:

Փետրվարի 2-ին զինծառայողի հարազատները Արմավիր-Երևան մայրուղիով երթ են կազմակերպել՝ ցանկանալով զինծառայողի մարմինը տանել Երևան: ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը ճանապարհին հանդիպել է վերջիններիս հետ, հայտնել մանրամասներ քրեական գործից և խնդրել դադարեցնել երթը[13]:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեպքը տեղի է ունեցել զինակիցների առջև[14]:

auroranews լրատվամիջոցիAuroranews.am տվյալներով զորամասը, որտեղ ծառայում էր Վահրամ Ավագյանը, տեղակայված է Ստեփանակերտից ոչ հեռու և համարվում է «Էլիտար» զորամաս: Այնտեղ ծառայում են մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների որդիներ, ովքեր զորամասում ձևավորել են «կլան» և ճնշում են գործադրում զինծառայակիցների նկատմամբ: Նշված խմբում են ԱԱԾ հակահետախուզության գլխավոր վարչության պետ, գեներալ Եսայի Մկրտչյանի որդին՝ Ռուբեն Մկրտչյանը, նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանի (Շմայսի) որդին՝ Դավիթ Մովսիսյանը, ԱՀ/ԼՂ ՊԲ արդեն իսկ նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կարեն Աբրահամյանի որդին, ԱԱԾ պաշտոնյա Կարեն Սահակյանի որդին՝ Հակոբ Սահակյանը, ոմն զինծառայող Արայիկ Սարգսյանը, ով զբաղվում է դրամահավաքությամբ և զինծառայողներից նոր համազգեստները վերցնելով և զորամասի ներսում վաճառելով[15]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նշված հրապարակման առնչությամբ 2020 թ. փետրվարի 5-ին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն և ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժող՝ նշված «Էլիտար» զորամասում տիրող իրավիճակի կապակցությամբ ծառայողական քննություն իրականացնելու պահանջով: 2020 թ. ապրիլի 8-ին Կազմակերպությունում ստացվել է ՀՀ ՊՆ 2020 թ. մարտի 30-ի պատասխանը, որով տեղեկացվել է, որ դիմումի մեջ նշված դեպքերի առնչությամբ իրականացված ծառայողական քննությունների արդյունքում 13 պաշտոնատար անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Այլ մանրամասներ ՊՆ կողմից չի տրամադրվել այն պատճառաբանությամբ, որ դեպքերի առնչությամբ հարուցված քրեական գործերը նախաքննության փուլում են և գործի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կարող է դիտարկվել որպես նախաքննության գաղտնիք:

Ըստ tert.am[16] կայքի հայտնի դարձած տեղեկությունների՝ հունվարի 30-ի առավոտյան զորամասի 2-րդ ռեակտիվ հրետանային դիվիզիոնի անձնակազմը ստացել է հաստիքային զենքերը և նախապատրաստվել մեկնելու բանակի ուսումնական կենտրոն՝ պլանավորված մարտական հրաձգությամբ կրակային վարժությունը կատարելու համար: Սակայն մինչ այդ շարքայիններ Վահրամ Ավագյանի և Դավիթ

---

[13] https://news.am/arm/news/557971.html?fbclid=IwAR2APixhM1EpXomwYO_1EV3nNFraNHlugsJjUQKvwduQCJkw-1AM7mPEd1M

[14] https://armlur.am/964632/

[15] https://www.auroranews.am/news/2020-02-03-hetaqnno%D6%82tyo%D6%82n-artsakhi-elitar-zoramasy-bardzrastichan-pashtonyaneri-ordinern-u-ingnaspanutyan-depqery-ushagrav-manramasner

[16] https://www.tert.am/am/news/2020/02/22/details/3217668

Մովսիսյանի միջև զորանոցի հարակից ծխարանում տեղի է ունեցել վիճաբանություն: Դավիթ Մովսիսյանը հանդիմանել է շարքային Վահրամ Ավագյանին զենքն անզգուշաբար իր կողմն ուղղելու պատճառով: Դրանից հետո զինվորները վիճել են, հայհոյանքներ հնչեցրել, տեղի է ունեցել քաշքշոց, ինչին միջամտել են զորամասի այլ ծառայողներ, միջադեպը կանխվել է զորամասում «արտոնյալ» կարգավիճակ ունեցող զինծառայող Արայիկ Սարգսյանի միջամտությամբ, որը Դավիթ Մովսիսյանի հովանավորյալն է:

Վիճաբանությունից հետո Արայիկ Սարգսյանը որոշել է պարզաբանումներ ստանալ տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ: Ըստ լրատվամիջոցի տեղեկությունների՝ Վահրամ Ավագյանն այդ միջադեպից հետո ճնշված է եղել, և մտավախություն է ունեցել սպասվող պարզաբանումից:

Սակայն, այդ օրը մեկ այլ միջադեպ է գրանցվել Դավիթ Մովսիսյանի մասնակցությամբ. կրակադաշտ մեկնելիս Դավիթ Մովսիսյանը մեքենայի նստարանից վայր է ընկել, ինչը ծառայակիցների ծիծաղն է առաջացրել: Մովսիսյանը վերջիններիս հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, իսկ իր մտերիմներից Խաչիկ Գասպարյանին հասկացրել է, որ վիրավարանքները ուղղված էին իր «չուզողներին»: Վահրամ Ավագյանը մտածել է, որ ակնարկը ուղղված է իրեն:

Զորամասի սպաներից մայոր Գ. Գևորգյանը հրաձգարանում ժամը 13:00-ի սահմաններում կրակոցների ձայն է լսել, և ղեկավարման կետից դուրս գալով տեսել է շարքային Վահրամ Ավագյանին, որը հայհոյելով և կրակոց արձակելով շարժվում էր համածառայակիցների ուղղությամբ: Վերջինս փորձել է հանգստացնել Ավագյանին՝ համոզելով, որ վայր դնի զենքը, սակայն Ավագյանը զենքն ուղղել է դեպի նա և հորդորել, որ չմոտենա: Այնուհետև Ավագյանն առաջ է շարժվել՝ շարունակելով անկանոն կրակոցներ արձակել տարբեր ուղղություններով:

Ստեղծված իրադրությանն անմիջապես իր մասնակցությունն է ցուցաբերել ՌՀՊՆ-ի հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, մայոր Խ. Ա.-ն: Լսելով կրակոցի ձայնը՝ նա շարժվել է այդ ուղղությամբ, փորձել թիկունքից մոտենալ Ավագյանին և վնասազերծել նրան, սակայն վերջինս նկատել է նրան և զենքն ուղղել դեպի նա, հորդորելով, որ հեռանա:

Այնուհետև, ըստ Խ. Ա.-ի պատմածի՝ Ավագյանը, կրակահերթ է արձակել դիտաշտարակի լեյտենանտ Վ. Վ.-ի ու Խաչիկ Գասպարյանի ուղղությամբ:

Մայոր Խ. Ա.-ն շարունակել է հորդորել Ավագյանին, որպեսզի վերջինս դադարեցնի իր գործողությունները, զենքը վայր դնի և հանդարտվի, միևնույն ժամանակ շարունակելով հետևել նրան: Սակայն, անսպասելիորեն Ավագյանը զենքը բարձրացրել է իր կրծքավանդակի ուղղությամբ և արձակել երկու կրակոց: Նրան սանիտարական մեքենայով տեղափոխել են Իվանյանի զինվորական հոսպիտալ, որտեղ էլ զինծառայողը մահացել է:

Միջադեպի վերաբերյալ զինծառայողները գրեթե նույնաբովանդակ բացատրություններ են տվել՝ նշելով, որ Ավագյանը կրակոցներ արձակելով և հայհոյանքներ հնչեցնելով շարժվել է Դավիթ Մովսիսյանի ուղղությամբ:

Պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Դավիթ Մովսիսյանին, Խաչիկ Գասպարյանին և Արայիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով («Զինծառայողների

փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետևանքներ»), և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Կրտսեր սերժանտ Սպարտակ Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Զինծառայողի մահվան դեպքի հանգամանքները պարզելու համար անցկացված ծառայողական քննության արդյունքներով որոշում է կայացվել մի շարք ավագ սպաների, այդ թվում՝ զորամասի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալին և դիվիզիոնի հրամանատարին զորացրել զինված ուժերի շարքերից: Խիստ կարգապահական տույժերի են ենթարկվել զորամասի հրամանատարն ու նրա տեղակալները, իսկ որոշ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվել է պաշտոնի իջեցում[17]:

Վահրամ Ավագյանը Արմավիրի մարզի Հայթաղ համայնքից էր: Նա 6 ամսվա զինծառայող էր[18]:

3. Տիգրան Մանվելյան

2020 թ. փետրվարի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հրազենային վնասվածքից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող, 2000թ. ծնված Տիգրան Մանվելի Մանվելյանը[19]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[20]: Կատարվում է նախաքննություն:

4. Տիգրան Մխոյան

2020 թ. փետրվարի 12-ին՝ ժամը 13:00-ի սահմանում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող Տիգրան Հուսիկի Մխոյանը[21]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած տեղեկատվության՝ Տիգրան Մխոյանը կրտսեր սերժանտ էր: Նա մահացել է զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[22]: Կատարվում է նախաքննություն:

---

17 http://nkrmil.am/news/view/2670

18 https://www.auroranews.am/news/2020-02-01-eghbors-marminy-cheng-hugharkavorelu-minchev-ardar-qnnutyun-chtarvi-mahatsats-zinvori-eghbayr

19 http://nkrmil.am/news/view/2676

20 https://armeniasputnik.am/armenia/20200213/22037379/zintsaraoxneru-mahvan-depqerov-qrgortser-en-harucvel-inqnaspanutyan-hascnelu-hodvatsov.html

21 http://nkrmil.am/news/view/2677

22 https://armeniasputnik.am/armenia/20200213/22037379/zintsaraoxneru-mahvan-depqerov-qrgortser-en-harucvel-inqnaspanutyan-hascnelu-hodvatsov.html

5. Հայկ Ասրյան

2020 թ. փետրվարի 14-ին՝ ժամը 19:00-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հրազենային վնասվածքից մահացել է սպա Հայկ Ներսեսի Ասրյանը[23]:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ լեյտենանտ Հայկ Ներսեսի Ասրյանի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[24]:

Զինծառայողը Սյունիքի մարզի Գորիս քաղաքի բնակիչ էր: Սովորել էր Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում[25]: Երեք տարով պայմանագիր է ունեցել ՊՆ հետ, որից ծառայել էր միայն կեսը:

Զինծառայողի հարազատները լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում հայտնել են, որ նա ծառայության ընթացքում խնդիր չի ունեցել և միշտ զորամասից գոհ է եղել: Զինծառայողների հարզատներից մեկը հայտնել է, որ իրենք չեն հավատում ինքնասպանության վարկածին, նշելով, որ Հայկ Ասրյանը բազմաթիվ ծրագրեր և նպատակներ է ունեցել:

Հարազատի խոսքերով՝ դեպքը տեղի է ունեցել մարտական դիրքեր բարձրանալու օրը: Զինծառայողը վերջին անգամ մոր հետ խոսելով հայտնել է, որ լավ է, բայց «խառն է», հավելելով, որ հետո կզանգի:

Զինծառայողի մահվան մասին առաջինը տեղեկացել է նրա հայրը՝ համացանցից[26]:

6. Սասուն Մարգարյան

2020 թ. մայիսի 10-ին ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող 2001թ. ծնված Սասուն Սուրենի Մարգարյանը[27]:

ՀՀ ՔԿ-ի լրատվության ծառայության տարածած տեղեկատվության համաձայն՝ զորամասի կրակային դիրքի հարակից տարածքում պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սասուն Մարգարյանի՝ կրծքավանդակի շրջանում մահացու հրազենային վնասվածք ստանալու դեպքով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում)[28]:

---

[23] http://nkrmil.am/news/view/2679

[24] https://armeniasputnik.am/society/20200215/22065140/arcaxum-mahacatc-spayin-inqnaspanutyan-en-hascrel-harucvel-e-qrgortc.html

[25] https://armlur.am/968444/

[26] https://galatv.am/hy/2813635/

[27] http://nkrmil.am/news/view/2780

[28] https://news.am/arm/news/577849.html, հուլիսի 6-ին ՀՀ ՔԿ կողմից ՀՔԱՎ-ին տրամադրած տեղեկատվությամբ նշվել է, որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին կետով՝ ինքնասպանություն, մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազությունը ՀՔԱՎ-ին տեղեկացրել է, որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը)՝ ինչպես ի սկզբանե նշվել էր ՀՀ ՔԿ կողմից հրապարակված պաշտոնական հաղորդագրության մեջ

Քրեական գործի շրջանակներում լեյտենանտ Հ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ստորադաի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար:

Ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գ.Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ ստորադաի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, շորթում կատարելու և զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու համար: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է[29]:

Նշենք, որ չնայած ՀՀ ՔԿ կողմից տարածված հաղարդագրությամբ, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված տեղեկատվությամբ հայտնել են, որ դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), սակայնուլյն՝ ՀՀ ՔԿ կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկատվության համաձայն՝ զինծառայողի մահվան փաստով քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին կետով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը):

19-ամյա զինծառայողը Արցախի Ասկերանի շրջանի Խաչեն համայնքից էր, մոտ 11 ամսվա զինծառայող էր[30]:

7. Ալիկ Մանուկյան

2020 թ. հուլիսի 18-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պատասխանատվության տարածքում, հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Ալիկ Նորայրի Մանուկյանը՝ հրազենային վնասվածքով (ծնված 2000թ., 2019-1 զորակոչ, Վայոց Ձորի զ/կ): Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին զինծառայողը մահացել է[31]:

Ալիկ Մանուկյանի մահվան մասին հարազատներն իմացել են իրենց բարեկամից, որից հետո զինծառայողի հորեղբոր որդին՝ Վազգեն Մանուկյանը զանգել է զորամաս և տեղեկացել, որ դեպքի մասին:

---

[29] https://forrights.am/2020/05/17/%d5%aa%d5%a1%d5%b4%d5%af%d5%a5%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a6%d5%ab%d5%b6%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d5%b2-%d5%bd%d5%a1%d5%bd%d5%b8%d6%82%d5%b6-%d5%b4%d5%a1%d6%80%d5%a3%d5%a1%d6%80/

[30] https://news.am/arm/news/577856.html

[31] http://mil.am/hy/news/8105?fbclid=IwAR0cs9AQTEKI-kUMl7JwV2jbplIOFCUHxXzV2DuRwUY4puwRlFjHOGdevWk

Ալիկ Մանուկյանի մայրը՝ Լիլիթ Սարգսյանը որդու հետ խոսել է մոտ 14 րոպե: Ըստ քննչական կոմիտեի տվյալների, Ալիկ Մանուկյանը հրազենային վիրավորումը ստացել է 14.00, այսինքն՝ մոր հետ զրույցից 3 րոպե անց:

Զինծառայողը մայրը աղմուկ է լսել որդու հետ զրուցելիս, հետո զինծառայողը մորն ասել է «խառն եմ, մի քիչ հետո կզանգեմ»: Մի քիչ հետո մայրն ինքն է զանգել որդուն, բայց նրա հեռախոսը անհասանելի է եղել:

Մայրը չի հավատում, որ Ալիկ Մանուկյանը ինքնասպանություն կանոնող էր գործել, քանի որ մի փոքր արյունից էլ վախենում էր: Մոր հետ կիսվել է, որ չի ցանկանում զենք բռնել, թեև Մոնթե Մելքոնյանի վարժարանն է ավարտել: Դեպքից մի քանի ամիս առաջ զինծառայողը տեղափոխվել էր տանկային գումարտակ, որպեսզի զենք չբռնի:

Մահից հետո Ալիկի մեդալներն անհետացել են: Անհետացել է նաև նրա բջջանին հեռախոսը: Դիակի զննուայն ժամանակ հարազատները ն կատել են, որ աչքը բավականին այտուցված է եղել:

Զինծառայողի մոր խոսքերով՝ որդին շատ գումար էր ուզում ծնողներից՝ ասելով, որ գումարն իրեն անհրաժեշտ է մինչև որոշակի ժամը: Մեկ ամսում վաթսուն հազար դրամ են ուղարկել զինծառայողին[32]:

8. Վահագն Սարգսյան

Պահեստազորային Վահագն Սարգսյանի մահվան վերաբերյալ Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազությանն ուղղված տեղեկատվության հարցման պատասխանից:

Համաձայն նշված տեղեկատվության՝ պահեստազորային Վահագն Սարգսյանը մահացել է 2020 թ. հոկտեմբերի 5-ին: Զինծառայողը նախ իրեն ամրակցված ինքնաձիգից կրակել է ծառայակցի՝ մայոր Պարույր Մուրադյանի ուղղությամբ՝ պատճառելով վնասվածք, ապա ինքնասպան եղել:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 34.104-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանության փորձ, ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը: Կատարվում է նախաքննություն:

9. Նարեկ Ասատուրյան

Ժամկետային զինծառայող Նարեկ Ասատուրյանը մահացել է 2020 թ. հոկտեմբերի 12-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում,

[32] https://forrights.am/2020/07/20/%D5%A5%D6%80%D6%87%D5%AB-%D5%A7%D5%AC-%D6%83%D5%B8%D5%B2-%D5%B9%D5%AB-%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%B4%D5%AB-%D5%A2%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A5%D5%B6-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD/?fbclid=IwAR2GYo8cAOrJEJdPGy25I820KN6IZgfRlD_Dp6wICQ9oFsD02ZKORxLXvFY

զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից: Կատարվում է նախաքննություն:

10. Նարեկ Բաբայան

Պահեստազորային Նարեկ Բաբնայանը մահացել է 2020 թ. նոյեմբերի 11-ին Ներքին Հանդ խմբավորման Շուքյուրթազ մարտական դիրքում իրեն ամրակցված ինքնաձիգից գլխի շրջանում արձակված կրակոցից:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Կատարվում է նախաքննություն:

11. Ռոբերտ Գևորգյան

Պահեստազորային Ռոբերտ Գևորգյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 29-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Կատարվում է նախաքննություն:

12. Ժորա Խաչատրյան

Կամավորական Ժորա Խաչատրյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. հոկտեմբերի 10-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Կատարվում է նախաքննություն:

13. Վահե Բաբայան

Ժամկետային զինծառայող Վահե Բաբայանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերի 15-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 3-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

Ինքնասպանություն

Զինվորական ծառայության հետ չկապված

14. Ռաֆիկ Ավետիսյան

2020 թ. ապրիլի 11-ին Արարատի մարզի Այգավան գյուղից դեպի Եղեգնավան գյուղ տանող ճանապարհին՝ հայտնաբերվել է Արարատի մարզի բնակիչ, 32-ամյա պայմանագրային զինծառայող Ռաֆիկ Ավետիսյանի դին՝ ծառից կախված վիճակում:

Արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել[33]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Վեդու բաժնում կայացվել է որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի (հանցագործության դեպքի բացակայության հիմքով):

15. Սամվել Աբգարյան

2020 թ. հունիսի 27-ին մահացած պայմանագրային զինծառայող Սամվել Աբգարյանի մահվան վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել ոչ պաշտոնական աղբյուրներով, և ոչ էլ լրատվամիջոցներով: Զինծառայողի մահվան մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Կազմակերպությանը մասնավորապես տեղեկացվել է, որ զինծառայողի դին հայտնաբերվել է իր տան հարակից խոհանոցում կախված վիճակում:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

16. Գոռ Մանուկյան

Սպա Գոռ Մանուկյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 27-ին՝ արձակուրդում գտնվելու ընթացքում: Զինծառայողը հայտնաբերվել է տանը՝ կախված վիճակում

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի կողմից:

17. Հայկ Գևորգյան

Պայմանագրային զինծառայող Հայկ Գևորգյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերի 28-ին՝ վերականգնողական արձակուրդում գտնվելիս: Զինծառայողն ինքնասպանություն է գործել իրենց նկուղի առաստաղի երկաթյա ամրակից կախվելու միջոցով:

[33] https://news.am/arm/news/572025.html

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

Ինքնասպանություն

Զինվորական ծառայության հետ կապված կամ չկապված լինելու հանգամանքը հայտնի չէ

18. Յուրիկ Գրիգորյան

Պայմանագրային զինծառայող Յուրիկ Գրիգորյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 8-ին: Զինծառայողը Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խոզնավար բնակավայրի Հին այգիներ կոչվող տեղանքում ինքնասպանություն է գործել ծառի ճյուղից կախվելու միջոցով:

Դեպքի մասին չի տեղեկացվել ոչ Դատախազության, ոչ Քննչական կոմիտեի և ոչ էլ Պաշտպանության նախարարությահն կողմից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:

Գ. Սպանություն

Այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով

1. Գարեգին Բաբակեխյան

2020 թ. ապրիլի 3-ին ԱՀ/ԼՂ ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ ժամկետային զինծառայող, 2000թ. ծնված Գարեգին Կամոյի Բաբակեխյանը[34]*:*

Զինծառայողը վնասվածքն ստացել է կզակի շրջանում: Փաստի առթիվ նախ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[35] (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), սակայն հետագայում քրեական գործը վերաորակվել է, քանի որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ զինծառայողին մահացու հրազենային վնասվածք է հասցվել ծառայակցի՝ ժամկետային զինծառայող, շարքային Արսեն Պետրոսյանի կողմից՝ վերջինիս ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգով: Վերջինս որպես կասկածյալ ձերբակալվել է, ապա կալանավորվել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով

[34] http://nkrmil.am/news/view/2733

[35] http://investigative.am/news/view/zinvori-mah11.html

(սպանություն՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով) նախատեսված հանցանք կատարելու հիմքով[36]:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հարուցված քրեական գործով իրավապահների մոտ նախնական տվյալներ են եղել, որ դիրքում նռնակ է պայթել: Ըստ նախնական վարկածի՝ Գարեգին Բաբակեխյանի մահվան գործով ձերբակալված ժամկետային զինծառայողը դիրքում հերթապահության ժամանակ մի ակնթարթ քնել է, որից հետո արթնացել է և տեսելով Բաբակեխյանին, մտածել է, թե հակառակորդն է, ու նռնակը նետել է նրա ուղությամբ: Ավելի ուշ, տեսնելով, որ նռնակի պայթելուց վիրավորվել է իր ծառայակից ընկերը, վերջինս, մտածելով, որ նրա վիրավորման համար իրեն են մեղադրելու, որոշել է հետքերը թաքցնելու համար կրակել նրան կզակի հատվածից, իբր, Գարեգին Բաբակեխյանը ինքնասպանություն է գործել: Օրաթերթի տեղեկություններով, սակայն, ձերբակալված զինծառայողը նշում է, թե նման բան չի եղել: Իսկ դեպքի պահին դիրքում գտնվող մյուս զինծառայողները իրարամերժ ցուցմունքներ են տվել[37]:

Սպանություն՝ խուլիգանական դրդումներով

2. Հենրիկ Արամյան

2020 թ. մայիսի 19-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ ժամկետային զինծառայող, 2000թ. ծնված Հենրիկ Սամսոնի Արամյանը[38]:

Ըստ ՀՀ ՔԿ կողմից տարածված հաղորդագրության՝[39] դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը): Սակայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան տեղեկացվել է, որ զինծառայողի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (սպանություն՝ խուլիգանական դրդումներով):

Քրեական գործի շրջանակներում պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Հ.Դ.-ն ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով (սպանություն՝ խուլիգանական դրդումներով)[40]:

Կատարվում է նախաքննություն:

Դիտավորյալ սպանություն

3. Վարդգես Գալստյան

---

36 http://investigative.am/news/view/zivori-mah.html

37 https://armlur.am/987055/

38 http://nkrmil.am/news/view/2789

39 http://investigative.am/news/view/henrik-aramyan.html

40 http://investigative.am/news/view/h-aramyan-dzerbakalum.html

Պահեստազորային Վարդգես Գալստյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ.հոկտեմբերի 27-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Կատարվում է նախաքննություն:

4. **Վահե Մկրտչյան**

Սպա Վահե Մկրտչյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 29-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Կատարվում է նախաքննություն:

Դ. Առողջական խնդիրներ
Ծառայության հետ կապված

1. **Արտյոմ Ղազարյան**

2020 թ. հունվարի 1-ին՝ ժամը 11:30-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված ստորաբաժանումներից մեկում հիվանդության հետևանքով մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող, 2000 թ-ին ծնված Արտյոմ Արթուրի Ղազարյանը[41]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ 2 հոդվածով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի երկրորդ մասով՝ անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև 315-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական գործի շրջանակներում իրականացված քննության շրջանակներում պարզվել է, որ Արտյոմ Ղազարյանը, գտնվելով հսկիչ անցագրային կետի վերակարգում (շինության ներսում), ուշաթափվել և վայր է ընկել:

Ընդունվելով նույն զորամասի վերակենդանացման բաժանմունք՝ մոտ մեկ ժամ անց զինծառայողի մոտ արձանագրվել է սրտի կանգ և մահ:

Արտյոմ Ղազարյանի մայրը՝ Եսենիա Ղազարյանը, forrights.am կայքի հետ զրույցում հայտնել է, որ որդին զորակոչվել է զինծառայության 2018 թ. հուլիսին և ունեցել է միայն հարթաթաթություն ու ողնաշարի ծռվածություն: Զինծառայության ընթացքում նա ոչ մի բողոք չի ունեցել: Ավելին՝ 2019 թ. դեկտեմբերի 22-ին Ղազարյանին տրամադրվել է արձակուրդ, որի ընթացքում, ըստ մոր, Ղազարյանը ևս ոչ մի բողոք չի ունեցել: Դեկտեմբերի 27-ին զինծառայողը վերադարձել է զորամաս:

[41] http://nkrmil.am/news/view/2634

Դեկտեմբերի 31-ի գիշերը Արտյոմ Ղազարյանը հեռախոսով խոսել է հարազատների հետ և հայտնել, որ ամեն ինչ լավ է: Իսկ 2020 թ-ի հունվարի 1-ի առավոտյան արձանագրվել է վերջինիս մահը:

Արտյոմ Ղազարյանի հայրը՝ Արթուր Մխիթարյանը, դիակի զննությանը ներկա գտնվելով, նկատել է, որ որդու մեջքի հատվածից մինչև ոտքերը կապտուկներ են եղել:

Հարցին, թե ինչու է այդպես, դատաբժիշկը պատասխանել է, որ հնարավոր է կապտուկներն առաջացել են զինծառայողին մի քանի ժամ տևողությամբ ճանապարհով տեղափոխելու արդյունքում[42]:

2. Վալերի Պետրոսյան

2020 թ. փետրվարի 9-ին՝ ժամը 07:45-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում հանկարծամահ է եղել ժամկետային զինծառայող Վալերի Նելսոնի Պետրոսյանը[43]:

Դեպքի առթիվ առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը՝ եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ[44]: Կատարվում է նախաքննություն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զինծառայողը երկու օր առաջ դիմել է զորամասի բուժկետ և հայտնել, որ իրեն լավ չի զգում, սակայն զորամասի բուժկետում հերքում են այդ տեղեկությունները: Նույնիսկ զորամասի գրանցամատյանում չկա որևէ գրառում այն մասին, որ զինծառայողը դիմել է բուժկետ: Ըստ օրաթերթի տվյալների՝ իրավապահները պարզել են, որ զորակոչվելիս Պետրոսյանը որևէ առողջական խնդիր չի ունեցել[45]:

3. Խաչիկ Բաղդասարյան

2020 թ. օգոստոսի 21-ին, ժամը 15:00-ի սահմաններում, ՀՀ զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Խաչիկ Գասպարի Բաղդասարյանը (ծնված 2001թ), կորցրել է գիտակցությունը: Ժամկետային զինծառայողը տեղափոխվել է ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ նրա կյանքը փրկել չի հաջողվել[46]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ) և 315-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ

---

42 forrights.am/2020/02/25/հիվանդությունից-մահացած-զինծառայողի/

43 http://nkrmil.am/news/view/2674

44 https://epress.am/2020/02/10/1621-2.html?fbclid=IwAR2l7BuYVbgJuE6x24GdHGSoFjd6jdy0tE0Ieo-6THLtgJnIWvVgcZg-rS8, https://armenpress.am/arm/news/1004229/

45 https://www.1in.am/2700151.html

46 http://www.mil.am/hy/news/8261

կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց): Կատարվում է նախաքննություն:

4. Կարեն Սիմոնյան

Պայմանագրային զինծառայող Կարեն Սիմոնյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 14-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

5. Արմեն Բաղդասարյան

Պահեստազորային Արմեն Բաղդասարյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերի 18-ին: Մարտական հերթապահության հերթափոխի ժամանակ Տաթև մարտական դիրք մեկնելիս զինծառայողի ինքնազգացողությունը վատացել է:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ) և 315-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց): Կատարվում է նախաքննություն:

Ծառայության հետ չկապված

6. Հայկ Բարսեղյան

2020 թ. հունվարի 3-ին մահացած պայմանագրային Հայկ Բարսեղյանի մահվան մասին տեղեկատվություն չի տարածվել ոչ պաշտոնական աղբյուրներով, և ոչ էլ ՁԼՄ-ներով: Դեպքի մասին նախ հայտնել է razm.info կայքը՝ ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված իր հարցման պատասխանից: Կայքը մասնավորապես տեղեկացրել է, որ պայմանագրային զինծառայողի ինքնազգացողությունը վատացել է, ինչից հետո նա մահացել է[47]*:*

ՀՀ զինվորական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ զինծառայողը դեպքի պահին գտնվել է ազատ հերթափոխում՝ տանը:

[47] https://razm.info/140067

Մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից: Արդյունքում որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

7. Կարեն Դարբինյան

2020 թ. հունվարի 3-ին մահացած սպա Կարեն Դարբինյանի մահվան մասին razm.info կայքը տեղեկացել է ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեգրված իր հարցման պատասխանից, որում նշվել է, որ սպան մահացել է ինքնազգացողությունը վատացման արդյունքում[48]*:*

ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

Հատագայում քրեական գործի հարուցումը մերժվել է:

8. Ալեքսանդր Թազագուլյան

2020 թ. մարտի 21-ին մահացած սպա Ալեքսանդր Թազագուլյանի մահվան վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել ոչ պաշտոնական աղբյուրներով, և ոչ էլ ՀԼՄ-ով:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազությունից ստացված գրությամբ, որով մասնավորապես տեղեկացրել են, որ 2020 թ. մարտի 19-ից զինծառայողը գտնվել է «Էրեբունի» ԲԿ-ում՝ «հեմոռագիկ ինսուլտ» ախտորոշմամբ, որտեղ, 2 օր անց, նա մահացել է:

Տեղեկացվել է նաև, որ զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Էրեբունու բաժնի կողմից: Հատագայում քրեական գործի հարուցումը մերժվել է:

9. Խաչիկ Բադալյան

2020 թ. մայիսի 24-ին՝ առողջական խնդիրների հետևանքով մահացած պայմանագրային զինծառայող Խաչիկ Բադալյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին հայտնի է դարձել հունիսի 27-ին razm.info կայքում հրապարակված նյութից: Կայքը մասնավորապես հայտնել է, որ դեպքի մասին տեղեկացել է Դատախազություն ուղղված հարցման պատասխանից[49]*:*

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան Դատախազությունից տեղեկացվել է, որ զինծառայողը մայիսի 15-ին ընդունվել է Էրեբունի ԲԿ՝ ծայրահեղ

[48] https://razm.info/140067

[49] https://razm.info/143607

ծանր վիճակում, որտեղ և մահացել է մի քանի օր անց: Զինծառայողի մոտ ախտորոշվել էր «հիպերտոնիկ կրիզ, հեմոռագիկ ինսուլտ»:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժնի կողմից:

10. Վազգեն Մարգարյան

2020 թ. հունիսի 2-ին մահացած սպա Վազգեն Մարգարյանի մահվան վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել ոչ պաշտոնապես և ոչ էլ ԶԼՄ-ներով:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որտեղ մասնավորապես նշվել է, որ զինծառայողը մայիսի 29-ին ընդունվել է Գր. Լուսավորիչ ԲԿ՝ «Կորոնավիրուսային հիվանդություն, թոքային զարկերակի տրոմբոէմբոլիա» ախտորոշմամբ:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

11. Մարիամ Դավթյան

Պայմանագրային զինծառայող Մարիամ Դավթյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. հունիսի 4-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որտեղ մասնավորապես նշվել է, որ զինծառայողի մոտ առկա է եղել ձախ կրծքագեղձի քաղցկեղ՝ 4-րդ փուլում՝ գլխուղեղի, թոքերի, լյարդի մետաստազներով: Վերջինս մահացել է տանը:

12. Սևադա Խաչատրյան

2020 թ. հունիսի 6-ին մահացած ենթասպա Սևադա Խաչատրյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկատվություն չի տարածվել:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որտեղ մասնավորապես նշվել է, որ զինծառայողը հանկարծամահ է եղել տանը՝ սրտամկանի ինֆարկտից:

Տեղեկացվել է, որ վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

13. Արամ Անանյան

2020 թ. հունիսի 12-ին մահացած պայմանագրային զինծառայող Արամ Անանյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկատվություն չի տարածվել:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որտեղ մասնավորապես նշվել է, որ զինծառայողը հանկարծամահ է եղել իրեն պատկանող վագոն-տնակում:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

14. Հերիքնազ Նիկողոսյան

Պայմանագրային զինծառայող Հերիքնազ Նոկողոսյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 2-ին:

Ըստ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալների՝ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

15. Արման Բաբայան

Սպա Արման Բաբայանի մահվանդ դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 9-ին: Վերջինս մահացել է սրտամկանի ինֆարկտից հիվանդանոցում:

Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

16. Էդիկ Շիրինյան

Սպա Էդիկ Շահինյանի մահվանդ դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 29-ին:

Վեջինս մահացել է անձնական մեքենայում սրտամկանի կաթվածից: Վարույթն իրականացվել է Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

17. Ալեքսեյ Դանիելյան

Պայմանագրային Ալեքսեյ Դանիելյանի մահվանդ դեպքն արձանագրվել է 2020 թ. սեպտեմբերի 20-ին:

Զինծառայողը մահացել է սրտի անոթային անբավարարությունից: Վարույթն իրականացվել է ԱՀ/ԼՂ քննչական կոմիտեի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

18. Ֆատո Սլոյան

Պայմանագրային Ալեքսեյ Դանիելյանի մահվանդ դեպքն արձանագրվել է 2020 թ. սեպտեմբերի 21-ին:

Զինծառայողը մահացել է տանը սրտի կանգի հետևանքով: Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

19. կորոնավիրուս զինծառայող 1

20. կորոնավիրուս զինծառայող 2

2020 թ. սեպտեմբերի 24-իբ Pastinfo.am կայքի հրապարակած տվյալների համաձայն կորոնավիրուսային վարակի պատճառով մահացել են երկու պայմանագրային զինծառայողներ[50]*:*

Զինծառայողներից մեկը մահացել է Սբ. Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ում, իսկ մյուսը՝ Կենտրոնական կլինիկական հոսպիտալում:

ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանը հաստատել է լուրը լրատվամիջոցի հետ զրույցում:

Պաշտպանության նախարարությունից չեն մեկնաբանել զինծառայողների մասին լուրը:

21. Արմենակ Հարությունյան

Սպա Արմենակ Հարությունյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 1-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

22. Տիգրան Պապիկյան

Սպա Տիգրան Պապիկյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 1-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

23. Հովիկ Դարբինյան

Պահեստազորային Հովիկ Դարբինյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 1-ին:

---

50 https://www.pastinfo.am/hy/news/2020/09/24/%D4%BF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BE%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB%D6%81-%D5%A5%D6%80%D5%AF%D5%B8%D6%82-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AE%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B5%D5%B8%D5%B2-%D5%A7-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC%E2%80%A4-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7/1061262?fbclid=IwAR13tH1qDB0gJZkamiLmvuVe8c2ezh2c_ZAiCZIgP-JTWIL3jRVtaoSjJBU

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

24. Համլետ Ղամբարյան

Պայմանագրային Համլետ Ղամբարյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերի 10-ին: Զինծառայողը մահացել է սրտամկանի ինֆարկտից:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

2020 թ. նոյեմբերի 5-ին գազաբալոնի պայթյունի հետևանքով այրվածքներ ստանալու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Կատարվում է նախաքննություն:

25. Վրույր Միխայելյան

Սպա Վրույր Միխայելյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերի 30-ին: Զինծառայողը մահացել է տանը՝ սրտամկանի ինֆարկտից:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ԱՀ/ԼՂ ոստիկանության Ստեփանակերտի քաղաքային վարչության կողմից

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Ե. Ավտովթար

Ծառայության հետ կապված

1. Սարգիս Ղուլյան

Ըստ ԱՀ/ԼՂ ՊՆ կողմից տարածված հաղորդագրության՝ 2020 թ. հունիսի 3-ին ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով մահացել է ՊԲ հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, 2001թ. ծնված Սարգիս Մասիսի Ղուլյանը[51]*:*

ՀՀ ՔԿ կողմից հետագայում տարածվեց տեղեկատվություն այն մասին, որ Մատաղիս-Մարտակերտ ավտոճանապարհի 17 կմ հատվածում, զորամասի հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի զինհամարանիշի ավտոմեքենան, զորավարժությունից վերադառնալիս, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և

[51] http://nkrmil.am/news/view/2802

կողաշրջվել, ինչի հետևանքով թափքում գտնվող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սարգիս Մասիսի Ղուլյանը ստացած վնասվածքներից մահացել է, իսկ լեյտենանտ Աբրահամ Տիգրանի Մարուխյանը, պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ կրտսեր սերժանտ Դավիթ Արմենի Սարգսյանը, շարքայիններ Միքայել Սամվելի Վահանյանը, Ժիրայր Վիկտորի Մանուկյանը, Արման Վահրամի Պողոսյանը և Արտակ Վարդանի Ծեկոյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մարտակերտի զինվորական հոսպիտալ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ)[52]: Կատարվում է նախաքննություն:

2. **Ռոլանդ Ներսիսյան**
3. **Գևորգ Ներսիսյան**

Սպա Ռոլանդ Ներսիսյանի և ենթասպա Գևորգ Ներսիսյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. հոկտեմբերի 30-ին:

Ընդ որում Ռոլանդ Ներսիսյանի անունը հրապարակվել է եղել պատերազմի հետևանքով զոհվածների ցուցակում, սակայն Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվությամբ՝ դեպքը համարվել է պատերազմի հետ ամիջական կապ չունեցող:

Մյուս դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Դեպքերի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

4. **Հարութ Խաչատրյան**
5. **Արամային Սարգսյան**

Պայմանագրային զինծառայողներ Հարութ Խաչատրյանի և Արամայիս Սարգսյանի մահվան դեպքերն արձանագրվել են 2020 թ. հոկտեմբերի 29-ին:

Դեպքերի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Դեպքերի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ: Կատարվում է նախաքննություն:

6. **Մովսես Սարգսյան**

Ժամկետային զինծառայող Մովսես Սարգսյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. նոյեմբերի 6-ին:

---

[52] http://investigative.am/news/view/zinvorakan-megena-vtar-mataxis-martakert.html

Դեպքի մասին Կազմակերպությաը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Ընդ որում՝ անունը հրապարակվել է եղել պատերազմի հետևանքով զոհվածների ցուցակում, սակայն Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվությամբ՝ դեպքը համարվել է պատերազմի հետ ամիջական կապ չունեցող:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

7. Կորյուն Սողոյան /Սողոմոնյան՝ ՀՀ ՔԿ տվյալով/

Սպա Կորյուն Սողոյանի Սարգսյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. հոկտեմբերի 31-ին:

Դեպքի մասին Կազմակերպությաը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Ընդ որում՝ անունը հրապարակվել է եղել պատերազմի հետևանքով զոհվածների ցուցակում, սակայն Դատախազության կողմից Կազմակերպությանը տեղեկատվություն տրամադրելիս պատերազմի հետևանքով մահացության դեպքերին չեն անդրադարձել՝ դրանց ոչ ամբողջական լինելու հիմնավորմամբ: Այսինքն կարող ենք փաստել, որ դեպքը համարվել է պատերազմի հետ ամիջական կապ չունեցող:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ատովթար

Ճառայության հետ չկապված

8. Նարեկ Հովակիմյան

2020 թ. մարտի 6-ին Երևանի Իսակովի պողոտայում բախվել են «Մերսեդես» մակնիշի երկու ատոմեքենաներ: Մեքենաներից մեկի վարորդ 44-ամյա Նարեկ Հովակիմյանը, ով ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից էր, սպա՝ կոչումով փոխգնդապետ, տեղում մահացել է[53]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ զինծառայողը վթարի է ենթարկվել անձնական մեքենայով: Տեղեկացվել է նաև, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ ՃՏՊ քննության բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

[53] https://shamshyan.com/hy/article/2020/03/07/1149246/

9. Էրիկ Ղազարյան

2020 թ. հունիսի 18-ին մահացած պայմանագրային զինծառայող Էրիկ Ղազարյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկատվություն չի տարածվել:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որով մասնավորապես տեղեկացվել է, որ զինծառայողը վթարի է ենթարկվել իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով, ինչի հետևանքով տեղում մահացել է:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացվել է ԼՂ/ԱՀ Ասկերանի ոստիկանության շրջանային բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

10. Գեղամ Խաչատրյան 2

Պայմանագրային զինծառայող Գեղամ Խաչատրյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 12-ին:

Դեպքը տեղի է ունեցել Սևան-Երևան ավտոճանապարհին: Զինծառայողը վթարի է ենթարկվել օգոստոսի 7-ին, տեղափոխվել Աստղիկ ԲԿ, որտեղ էլ մահացել է:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Կոտայքի մարզի քննչական բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

11. Արամ Ղազարյան

Սպա Արամ Ղաղարյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 11-ին:

Զինծառայողը որպես ուղևոր գտնվել է այլ անձի վարած մեքենայում: Վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Սևանի քննչական բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

12. Սամվել Ղարիբյան
13. ԱրամԱխցխեցյան

Պայմանագրային զինծառայողները գտնվելով այլ անձի վարած տաքսիում վթարի են ենթարկվել 2020 թ. օգոստոսի 6-ին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժնի կողմից:

14. Ալիկ Սրապյան

Պայմանագրային զինծառայող Ալիկ Սրապյանը իր մեքենայով վթարի է ենթարկվել 2020 թ. օգոստոսի 7-ին՝ գտնվելով ազատ հերթափոխում:

Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալներով՝ վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

15. Նունե Ավետիսյան

2020 թ. սեպտեմբերի 9-ին սպա Նունե Ավետիսյանը իր վարած մեքենայով Գեղարքունիքի մարզ Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի 53 կմ հատվածում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և ընկել Սևանա լիճը, ինչի հետևանքով տեղում մահացել է[54]*:*

Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալներով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

16. Գևորգ Աբգարյան

Պայմանագրային զինծառայող Գևորգ Աբգարյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ.հոկտեմբերի 25-ին՝ իր մեքենայով վթարի է ենթարկվով Վայոց Ձորի Ձառիթափ գյուղում:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Վայոց Ձորի մարզային քննչական բաժնի կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

17. Վրեժ Մարտիրոսյան

2020 թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 20:40-ի սահմաններում, Երևան-Գորիս ճանապարհին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, մահացել է ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի զինծառայող, 2001թ. ծնված Վրեժ Համլետի Մարտիրոսյանը[55]*:*

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ զինծառայողը որպես ուղևոր գտնվել է հոր վարած մեքենայում:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Սիսիանի քննչական բաժնի կողմից:

18. Սերյոժա Խալաթյան

[54] https://www.zangezur.tv/news/view/16847.html

[55] https://nkrmil.am/news/view/3159

Պայմանագրային զինծառայող Սերյոժա Խլղաթյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ.դեկտեմբերի 16-ին:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Զինծառայողը վարի է ենթարկվել Երևան-Երասխ ավտոճանապարհ՝ իր վարած մեքենայով:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

19. **Կարապետ Յայլոյան**
20. **Ահարոն Խաչատրյան**
21. **Վահե Ղազարյան**

2020 թ. դեկտեմբերի 28-ին սպա Կարապետ Յայլոյանը, Ավագ ենթասպա Ահարոն Խաչատրյանը և Ենթասպա Վահե Ղազարյանը վթարի են փնթարկվել Գորիս-Կապան ավտոճանապարհին:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

Ատովթար

Ծառայության հետ կապված կամ չկապված լինելու հանգամանքը հայտնի չէ

22. **Ներսես Մայիսլան**

Ենթասպա Ներսես մայիսլանը մահացել է 2020 թ. հունիսի 18-ին[56]*:*

Չնայած դեպքի մասին ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկատվություն է տրամադրվել razm.info կայքի հարցմանն ի պատասխան, այնուամենայնիվ նշված դեպի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տեղեկացվել է միայն ՀՀ ՊՆ կողմից՝ չմանրամասնելով դեպքի պատճառը:

Զ. Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ կապված

Ընկել է ձորը

1. **Արթուր Նալբանդյան**

2020թ. հունվարի 21-ին՝ ժամը 13:15-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դժբախտ պատահարի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող, 1980թ. ծնված Արթուր Մարտունի Նալբանդյանը[57]*:*

---

[56] https://razm.info/144925

[57] http://nkrmil.am/news/view/2646

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ԶԼՄ-ներից մեկին տրամադրած տվյալների համաձայն՝ պայմանագրային զինծառայող մահացել է ձորն ընկնելու հետևանքով[58]:

Դեպքի առթիվ երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Ըստ ՀՔԱ Վանաձոր գրասենյակին ՀՀ գլխավոր դատարազությունից հայտնած տեղեկության՝ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Զինծառայողները մնացել են ձնահյուսի տակ

2. **Կարապետ Նազարյան**
3. **Տիգրան Արզումանյան**
4. **Նվեր Շահբազյան**

2020 թ. փետրվարի 7-ին՝ ժամը 16:50-ի սահմաններում, Սյունիքի մարզի զորամասերից մեկի պահպանության տեղամասում ձնահյուսի տակ են մնացել չորս պայմանագրային զինծառայողներ:

Ձեռնարկված որոնողական-փրկարարական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են պայմանագրային զինծառայողներ, շարքային Կարապետ Սեդրակի Նազարյանի, կրտսեր սերժանտ Տիգրան Արմենի Արզումանյանի և կրտսեր սերժանտ Նվեր Տիգրանի Շահբազյանի դիերը:

Պայմանագրային զինծառայող, շարքային Համլետ Գրենիկի Միրզոյանին հաջողվել է դուրս բերել ձնահյուսից: Նա ստացել է մարմնական թեթև վնասվածքներ[59]:

NEWS.am-ի հետ զրույցում Համլետ Միրզոյանը հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել դիրքերից զորամաս գնալու ճանապարհին՝ խրամատների մոտ, երբ զինծառայողների ոտքերի տակ ձյան շերտը բացվել է, ու նրանք ընկելով՝ տևական ժամանակ մնացել են ձյան շատ հաստ շերտի տակ:

Դեպքի առթիվ հարուցվել է ն քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով[60]:

Հետագայում հարուցված քրեական գործը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ չկապված

Հրդեհ մեքենայում

5. **Հովիկ Քոսակյան**

---

58 https://ipress.am/arm/military/52

59 http://mil.am/hy/news/7441

60 https://yn.am/?military&p=101742&l=am

2020 թ. մայիսի 20-ին ավտոմեքենայում բռնկված հրդեհի հետևանքով մահացած սպա Հովիկ Քոսակյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին հայտնի է դարձել հունիսի 27-ին՝razm.info կայքում տեղադրված հրապարակումից, որտեղ նշվել է, որ դեպքի մասին կայքին հայտնի է դարձել Դատախազություն ուղարկած հարցման պատասխանից[61]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան տեղեկացվել է, որ Արմավիր-Երևան ավտոմայրուղու Զվարթնոց գյուղի հատվածում հրդեհվել է «Մազդա» մակնիշի մեքենա, որում զինծառայողը գտնվել է որպես ուղևոր: Չկարողանալով դուրս գալ մեքենայից, զինծառայողը ստացած այրվածքներից տեղում մահացել է:

Հայտնի չէ, թե արդյոք դեպքի պահին զինծառայողը գտնվել է զինծառայության մեջ, թե ազատ հերթափոխում: Հայտնի չէ նաև, թե ում մեքենայում է գտնվել զինծառայողը դեպքի պահին:

Կազմակերպությանը ՀՀ գլխավոր դատախազությանն կողմից տեղեկացվել է, որ Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժնի կողմից:

Տրակտորի շրջվելու հետևանքով

6. Հակոբ Բաբասյան

2020 թ. հունիսի 28-ին Տավուշի մարզի Բերդ համայնքի Արծվաբերդ բնակավայրի «Թագավորանց» կոչվող թաղամասում տրակտորի շրջվելու հետևանքով Բերդի բժշկական կենտրոնում գիտակցության չգալով մահացել է պայմանագրային զինծառայող 30-ամյա Հակոբ Բաբասյանը:

Իսկ վերջինիս եղբայրը՝ զինծառայող 37-ամյա Կարեն Բաբասյանը, ով ևս գտնվել է տրակտորի մեջ, ստացել է մարմնական վնասվածքներ[62]:

Կազմակերպությանը ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրած տեղեկության համաձայն՝ զինծառայողը դեպքի պահին գտնվել է ազատ հերթափոխում:

Տեղեկացվել է նաև, որ նախապատրաստված նյութերի հիման վրա քրեական գործի հարուցումը մերժվել է:

Տանը շինարարական աշխատանքների ժամանակ մնացել է պատի փլուզման տակ

7. Հայկ Իսպիրյան

Պայմանագրային Հայկ Իսպիրյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 21-ին:

Դատախազությանն տվյալներով՝ զինծառայողը մահացել է տանը՝ շինարարական աշխատանքներ կատարելիս:

Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի կողմից:

---

61 https://razm.info/143607

62 https://shamshyan.com/hy/article/2020/06/28/1158449/

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Մեղվի խայթոց

8. Վարդան Իսրայելյան

Սպա Վարդան Իսրայելյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. օգոստոսի 30-ին:

Դատախազության տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել է ԱՀ/ ԼՂ Ասկերանի շրջանի Հիլսի գյուղում մեղվի խայթոցի հետևանքով: Վարույթն իրականացվում է ԱՀ/ԼՂ ոստիկանության կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Թունավորում էթիլ սպիրտով

9. Համլետ Ամիրխանյան

Պայմանագրային Համլետ Ամիրխանյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. սեպտեմբերի 9-ին:

Դատախազության տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել տանը՝ էթիլ սպիրտով թունավորվելու հետևանքով: Զինծառայողը տեղափոխվել է Արմենիա ԲԿ, որտեղ էլ մահացել է:

Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արմավիրի քննչական վարչության կողմից:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Է. Ականի պայթյուն

Զինվորական ծառայության հետ կապված

1. Տարոն Պողոսյան

2020 թ. մայիսի 4-ին ականապայթյունային մահացու վիրավորում է ստացել ԱՀ/ԼՂ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի զինծառայող, սպա 1988թ. ծնված Տարոն Պողոսյանը[63]:

Կազմակերպությանը հայտնի պաշտոնական տվյալների համաձայն՝ մայոր Տարոն Պողոսյանը գտնվել է զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի թիկունքային հատվածում, երբ տեղի է ունեցել ականի պայթյունը:

Զինծառայողի մահվան դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ)[64]: Կատարվում է նախաքննություն:

Ը. Զենքի օգտագործման կանոնների խախտում

Զինվորական ծառայության հետ կապված

1. Իսրայել Կարապետյան

---

[63] http://nkrmil.am/news/view/2771 http://nkrmil.am/news/view/2771

[64] https://armeniasputnik.am/society/20200505/22944349/zincarayox-mah-tcarayutyun-anpuyt-verabermunq.html

Ժամկետային զինծառայող Իսրայել Կարապետյանի մահվան դեպքան արձանագրվել է 2020 թ. հոկտեմբերի 4-ին:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

2. **Ժիրայր Մաթևոսյան**
3. **Գեղամ Հովհաննիսյան**

2020 թ. դեկտեմբերի 1-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ծառայողական պարտականությունները կատարելիս՝ տարհանվող զինամթերքի պայթյունի հետևանքով, զոհվել են ՊԲ զինծառայողներ Ժիրայր Վաչիկի Մաթևոսյանը և Գեղամ Մերուժանի Հովհաննիսյանը[65]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 4-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ և ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, թե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ:

Կատարվում է նախաքննություն:

Թ. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում

1. **Դավիթ Մարտիրոսյան**

Պահեստազորային Դավիթ Մարտիրոսյանի մահվան դեպքն արձանագրվել է 2020 թ. հոկտեմբերի 20-ին:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 4-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

[65] https://www.facebook.com/artsakhdefencearmy/posts/3909611529071188